



ԹԻԻ 96 1860 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԼԵԿՏԵՆՏԻ ՈՍԻ

ՅԱՂԱԳՄ ՄԱՀՈՒ

ԿԱԼԱԾՉԱՅ

Լ. Եսպէս Մ արօիմիանոս՝ կայսրութեան եւ
աներ կոչուելու պատիւներէն զրկուելէն ետքը բաղ-
դը ջաճնալուն չհամբերելով եւ անպատիժ մնալէն
յանկգնելով նոր դիտաւորութիւններու եւ նոր խոր-
հուրդներու սկսաւ : Խր Փաւստա աղջիկը շողոքոր-
դեց . եւ աղաչանքներով եւ փայփայելով հաճեցուց
որ իր էրիկը մատնէ . անոր աւելի արժանաւոր էրիկ
մը տալ խոստանալով : Եղաչեց որ իր սենեակին
դուռը բաց ձգէ . եւ պահպանները տկար ձգե-
լուն մէկ ճարը նայի : Փաւստա անոր ըսածները կա-

տարեկու խօսք տուաւ . բայց Կոստանդիանոսի աջ
խմացուց : Լ'մէն բան անանկ տնօրինուեցաւ շոր նեն-
դաւորը յայտնապէս իր գործքովը բռնուի : Կայսեր
անկողինին մէջ ներքինի մը պառկեցուցին . եւ այս
անպիտան հոգին՝ աշխարհի ամենապատուական հոգ-
ւոյն ազատութեանը գին եղաւ : Ս'աքսիմիանոս գի-
շերուան մէջ կելլէ . եւ ամէն բան իր նպատակին նը-
պաստաւոր կը գտնէ . պահապան քիչ . անոնք ալ այս-
դիս այն դին ցրուած : Իր ներս մտնելիքը արդարա-
ցընելու համար կըսէ . երազ մը տեսայ . երթալու
կայսեր պատմելու եմ : Դաշոյնը ձեռքը՝ սենեակը
կը մտնէ . ներքինին կըսպաննէ . դուրս կելլէ . ը-
րած եղեռնագործութիւնը կը հրատարակէ եւ կը
պարծի : Բայց միւս կողմէն ալ Կոստանդիանոս խել
մը սպառազէն մարդոցմով երեւան կելլէ . սպաննը-
ուած ներքինիին մարմինը կայսեր սենեակէն դուրս
կը հանուի : Ս'արդասպանը այսօր կը տեսնէ՝ ապ-
շութենէն լեզուն կը կապուի : Ըմբարշտութիւնն ու
եղեռնագործութիւնը երեսը կը տրուի . եւ անոր մի-
այն այս շնորհը կըլլայ որ իրեն մեռնելուն կերպը
ինքը ընտրէ . եւ կը կախուի : Ըստպէս այս մեծ
կայսրը . քսան տարի աշխարհի տիրողը իր գարշելի
կեանքը խայտառակ մահուամբ վերջացուց :

ԼԵ . Ըստուած իր ժողովուրդին եւ իր կրօնքին
վրէժով ծեր Ս'աքսիմիանոսէն առնելէն ետքը աղե-
տալից հալածանաց սկզբնապատճառ Դաշերիոսի վը-
րայ ձեռքը երկնցույ . եւ իր բազուկին ծանրութիւ-
նը անոր զգալի ըրաւ : Ըստ ալ Դիոկղետիանոսի պէս
իր քսանմեակը տօնել կը խորհէր . եւ լծէպէտ ա-

աւջուց իր հարկապահանջութիւններովը գաւառները
ոսկի արծաթ չէր թողուցած, այսու ամենայնիւ իր
ժողովուրդին վրայ նոր հարկ ձգեց: Նաորէ արդ-
եօք պատմել թէ այս հարկը ի՞նչ բռնութիւններով
ժողովել կուտար: Իր հրամանին կատարողներն էին
ղենուորները. կամ աւելի շիտակն ըսեմք, դահիճ-
ները: Սարդ հանգիստ չէին թողուր. որոնք չլի-
տէին թէ ո՞վ մտիկ ընեն, Պունեցածնին կուղուէր
իրենցմէ. եւ չտուողները անգթաբար կը խոշտանգե-
ին: Եւնքան գողերու եւ աւաղակներու ծակաչքու-
թենէն մարդ չէր ազատուէր: Տարւոյն մէկ եղանա-
կին մէջ ալ բռնութիւննին չէր դադրեր: ամէն համ-
բարանոց՝ ամէն շտեմարան՝ մէկ մէկ կայսերական
գործակալ կար: Կենաց հարկաւոր ամէն բան կը վեր-
ցընէին կը տանէին: Եւ թէպէտ մարդոց աշխատա-
նացը եւ բանելուն արդիւնքները յափշտակելը շատ
անգթութիւն էր, բայց ապագային յաւսովն անոնք
կը մխիթարէին: Կրնայ մարդ առանց հագուստի եւ
առանց կահուց ըլլալ: Չէ՞ մի որ այս ամէն բաներս ալ
գինի եւ ցորենեղէն ծախելով ձեռք կը բերուի:
Սակայն երբ բռնաւորը ամէն հունձքերուն եւ այգե-
կութքին բերած ստակը աքահուութեամբ վերցընէ նե՛-
ր՞նչպէս կրնայ ծախու առնուիլ: Ո՞վ մնաց որ իր
գոյքէն չըրկուեցաւ այն քսանեմեակին ծախքը վճարե-
լու համար. բայց այն ալ կատարելու պարծանքը
չունեցաւ Գաղերիոս:

ԼՏ. Լիկինիօսը կայսր անուանելէն ետքը է՛ի
աղէկ դժուար եղաւ Սաքսիմինոսին սիրտն առնելը
որ կեսար անունը եւ պատուոյ երրորդ աստիճանին

մէջ մնալը չէր փորձէր : Գաղերիոս շատ անգամ անոր պատգամաւորներ խրկեց՝ իրեն պարտական եղած յարգանքը յիշեցընելու , որ իր ընտրութեանը կը հակառակի . որպէս զի տարիքին տեղի տայ եւ ծերութիւնը պատուէ : Բայց այն երկտասարդը ասով՝ աւելի յանդգնեցաւ . ժամանակը պատճառելով զինքն արդարացուց , կը պնդէր՝ որ ծիրաննոյ պատիւը ո՛վ որ առաջ առաւ նէ՛ անիկայ միւսէն վեր ըլլալու է . եւ Գաղերիոսի աղաչանքն ու հրամանը կը ծաղրէր : Այն ատենը Գաղերիոս իր անխոհեմութեանը վրայ զղջաց : Կեսարի պատիւ կրելու անարժան այնպէս մէկը անոր համար բարձր աստիճանի հասցուցեր էր՝ որ իր ամէն կամացը կուրօրէն հնազանդի . բայց այս ապերախտը անոր խրատներն ու հրամանները կարհամարհէր : Սաքսիմինոսի լըբութենէն յաղթուելով կեսար անունը խափանեց . Ի կիկանոսի՝ հետ մէկ տեղ աւգոստոս անունն առաւ . եւ Սաքսենտիոսն ու Կոստանդիանոսը աւգոստեան անուանեց : Իհիւ մը ետքը Սաքսիմինոս սուրհանգակով մը անոր իմաց տուաւ որ իւր զօրքը զինքը կայսր ընտրեցին : Գաղերիոս այս լուրը առաւ նէ սխիտը կոտորեցաւ . եւ չորոն ալ կայսր անուանեց :

Ի . Իր թողաւորութեան տասն եւ ութերորդ տարին Լատուած անոր պատուհաս խրկեց բացարձակապէս անբժշկելի վէրք մը : Ընթիւն անդամներուն վրայ խոց մը գոյացաւ : Ախրարոյթները կը կըտրեն , բայց դոցուած խոցին տակէն խոց մըն ալ կեւլէ . երակ մը կը պատռի . եւ այնքան արիւն Իւլէ անկէց որ կեանքը վտանգի մէջ կիսնայ : Եր-

իւնը կը կայնեցընեն . նորէն արիւն կը փլչի : Այլեր-
 շապէս խօցը գոցունեցաւ : Այն դիպուածով մը նորէն
 առաջին անգամիններէն շատ արիւն վազեց . ինքն
 երեսին գոյնը նետեց եւ ուժէ ինկաւ : Այլերժապէս
 արեան հեղեղատը ցամաքեցաւ . բայց հիւանդութիւ-
 նը բժշկական դեղերէն ապստամբ գտնուեցաւ . խո-
 ցին մօտ տեղերը քաղցկեղ ելաւ , եւ ս'ըբան որ շատ
 տեղ չտարածուելու համար կը կտրէին՝ այնքան կը
 տարածուէր . դեղերը անիկայ մեղմացընելու տեղը
 աւելի կը գէշընէին : Ամէն կողմէն հռչակաւոր բը-
 ժիշկներ կանչուեցան . բայց մարդկային օգնութիւն-
 ներով բան մը չվաստըկուեցաւ : Առաքելուն դիմե-
 ցին . Ապողոնի եւ Ասկլեպիոսի օգնութիւնը խընդ-
 րեցին . Ապողոն դեղ մը սովորեցուց . ըրին . բայց
 աւելի գէշ եղաւ* . Սահը կը մօտենար . եւ արդէն
 ստորին անգամներուն տիրած էր . աղիքներն աւրը-
 ուած էին . եւ նոսր տեղի միտը կը միտտէր ու կը-
 տոր կտոր կը թափէր . Ասեղձ բժիշկները թէպէտ
 յուսահատած , բայց աշխատելէն չէին դադրեր . չը
 կըցած յաղթած հիւանդութեանը հետ կը պատե-
 րադմէին : Հիւանդութեան դրսէն ելած հակառակու-
 թիւնը անիկայ ներսի դին քալեցուց . ներսի գործա-

* Տեղ տեղ Ապողոնի պատգամատեղիներ կային . կը-
 ռապաշտները շատ բանի ճար կը հարցընէին անոնցմէն
 եւ պատասխանը երբոր դէւերը Ապողոնի արձա-
 նին բերնէն չըուցէին նէ՝ քուրմերը իրենցմէ բան
 մը կը հարէին : Այս պատգամներուն վրայ պիտի խօ-
 տիմք երբոր դէւերու և կախարդութեան վրայ խօ-
 տիմք :

րանքը բռնուեցան . եւ որդեր գոյանալ սկսան . Պաշ-
լատն ու քաղաքը ժանտ հոտով լեցուեցաւ . մի-
զանցքն ու աղբը դուրս դալուն ճամբան իրար խառ-
նուեցան . որդերը զինքը կուտէին . մարմինը անտա-
նելի ցաւերու մէջ կը փտտէր կը հալէր : Ըտեն ա-
տեն քստմենլի մանչիւններ եւ հեծեծախքներ կը լըս-
ուէին իրմէ : Բնական տաքութեամբ որդերը դուրս
քաշելու համար վրան ողջ անասուններ կամ տաք միս
կը դնէին . բայց երբ վերքը կը մաքրէին՝ որդերու
բոյն մը երեւան կելլէր . այն ժանտ հիւանդութեան
անսպառ աղբիւր եղած էին իրեն աղիքը : Ա՛րմնոյն
անդամները իրենց սուլորական ձեւը կորսնցուցած
էին . վերի կողմը մինչեւ վերքը կմախք մը դարձեր
էր . սոսկալն նիհարութիւն մը՝ կաշին ոսկորներուն
էր փակցուցեր . ոտքերը չափազանց ուռեցած՝ ոտքի
նմանելու տեղ չունէին : Այս սարսափելի հիւանդու-
թիւնը լման տարի մը անիկայ հայեցուց մաշեցուց :
Բայց վերջապէս ցաւերէն յաղթուելով առ Աստուած
դարձաւ . նոր տեսակ ցաւերուն հանգիստ տուած մի-
ջոյին խոստացաւ կործանած եկեղեցին նորէն շինե-
լու եւ եղած վնասները դարմանելու : Ա՛րջին կէ-
տին մօտ էր , երբ իր հրամանովը այս հրովարտակը
հրատարակուեցաւ :

ԼՐԳԱՅԻՆ

Ներսէս մէջ սուրբ հայրապետին աջը :

Սատենագէտներուն յայտնի է սուրբ Ներսէս մեծ հայրապետին մարմնոյն հրաշալի կերպով դանդախել ժողովրդի դարուն մէջ. որ գրուած է Սուրբ Սրբոյն մէջ, եւ Սոփեր Հայրական անունով Այն ինչտիկ տպուած գրքոյններուն կարգը, (հարս. 1) : Հոն կը գտնեմք որ այն ժամանակը Երզնկայու առաջնորդն էր Սարգիս արք եպիսկոպոսը, որ իր Յովհաննէս անուն որդւոյն օգնութեամբը, որն որ պատմիչը բարեսէր իշխան պարոն Յովհաննէս կանուանէ (Էր. 61) : սուրբ Փրկչի գեղեցիկաշէն եկեղեցին շինեց : Սուրբ հայրապետին մարմնը դանդախեալ հայոց ՉԻԼ Թուին փետրուար ամսոյ սկիզբը : Սարգիս արք եպիսկոպոսը սրբոյն մարմնը քաղաք տարաւ, քանի մի մասունքները դանդախ գեղը ձգելով. եւ երկու բազուկին վրայ՝ իմաստուն ոսկեգործներուն արծաթեղէն եւ ոսկեղէն պահարաններ շինել տուաւ վրանին մէկ մէկ քիչ բաց տեղ ձգելով, որ սուրբ բազուկները տեսնուին : Եւ բազուկը Երզնկայի սուրբ Փրկչի եկեղեցին դրաւ. իսկ ձախ բազուկը՝ Նփրատ գետոյն միւս կողմը Տիրաշէնի եկեղեցին խրկեց : Երբեմն Երզնկայի առաջնորդ Լմափացի արժանապատիւ Իոհաննէս վարդապետը նոյն ե-

կեղեցւոյն մէջ նոյն սուրբ աջը տեսեր՝ եւ պահարանին վրայ քանդակուած յիշատակագիրը կարդացեր եւ օրինակեր էր, որ մեզի հաղորդելու հաճեցաւ. մենք ալ կը փութամք հոս հրատարակել. եւ է այս:

“Օգորդարեցաւ շնորհաբաշխ բազուկ աջ սրբ-
 “բոյն Ներսէսի, հրամանաւ արք եպիսկոպոսին տեա-
 “ռն Սարգսի եւ պարոն Յովհաննէսի, մնալ միշտ
 “ի փառազարդ տաճարն Լստուծոյ սուրբ Փրկիչ, ի
 “վայելումն աստուածապարգեւ զաւանդոյն իւրեանց
 “Ներսէսի եւ Վրիգորի: Կատարեցաւ ի Թուին
 ԶԻՐ”:

Յիշատակարանս ամէն կերպով համեմատ կու-
 դայ սուրբ հայրապետին մարմնոյն գտնուելուն պատ-
 մութեանը. ժամանակն ալ ճիշդ, հայոց 722 թը-
 ուականը՝ մեր սուրբական հաշուով Փրկչին 1273
 թուականը կը լլայ. որովհետեւ հայոց թուին վը-
 րայ 551 աւելցրնելու է փրկչական թիւը գտնելու
 համար: Բայց սուրբ մարմնոյն գտնուելուն պատմիչը
 721 հայոց թիւը՝ որ է գտնելուն ժամանակը,
 փրկչին 1275 թուին կը համեմատէ: Եւս տար-
 բերութեանս պատճառը չգիտնալնիս անկեղծ կը
 խոստովանիմք: Պ. Տիւլորիէ բազմահմուտ զիտ-
 նականը Լիւդուիգ Ժամանակագրութեան մը յօրինած է,
 որ մինչեւ հիմայ ձեռքերնիս չհասաւ. թէ որ անոր
 մէջ ասոր լուծումը գտնեմք նէ՝ մեր լնթերցողաց
 ալ կը հաղորդեմք:

Հայ գիտնականացի մը նամակ

Աղբային յիշատակները մեր Երեսակը կարգա-
ցողներուն ակորժելի գիտնալով ո՛ւր որ գտնեմք նէ
հրաաարակել կուզեմք . մանաւանդ այնպիսի բաներ որ
Հայոց պատմութեան մէջ գրուած չըլլալով շատերուն
անծանօթ են : Ասպէս է հետեւեալ նամակը որ
Հայոց գունդստապլը, այսինքն՝ Թագաւորութեան
մեծ պաշտօնատարը Կիպրոսի Թագաւորին կը գրէ
1248ին :

“ Եւ վեհափառ եւ հզօր իշխան Հենրիկոս
Լուսինեան՝ շնորհիւն Աստուծոյ Թագաւոր Կիպրոսի,
առ Թագուհի քոյր նորա եւ առ ազնուաշուք եղ-
բայր նորա Իվէս Իպէլինեայ, Հայաստանի գունդ-
ըստապլը բարեւ եւ սէր կը մատուցանէ :

“ Վիտցած ըլլաքոր այս ճանապարհորդութիւ-
նըս Աստուծոյ փառացը եւ քրիստոնէութեան բար-
ւոյն համար ընելովս՝ Յիսուս Վրիստոս հաճեցաւ
մինչեւ Սըմըրղանդ քաղաքն ինծի առաջնորդելու :
Հատ երկիրներ տեսանք . եւ Հնդկաստան ետեւնիս
ձգելով երկու ամիս ճանապարհորդութիւն ընելով
Լատաքի կողմերն անցանք, շատ քաղաքներու աւե-
րակներ տեսանք, որոց մեծութիւնը չափու եւ հա-
րըստութիւնը հաշուի չէր գար . բայց Թաթարները
կործանած էին : Ասոնց մեռցուցածներուն ոսկորնե-
րէն բաղկացեալ նշանաւոր բարձրութեամբ բլուրներ
տեսանք, եւ մեղի անանկ Երեւցաւ որ՝ այս հե-
թանդները մեռցընող Թաթարները այն կողմերը չը

Գային նէ՝ բոլոր այս ազգը կրնային ծովուն այս դի-
ու ամէն երկիրներն արշաւել եւ տիրել:

« Իսկ թաթարներուն անթիւ բաղմաթիւնը ար-
դէն գիտես: Եղէկ նեւ նետել գիտեն, ահաւոր
տեսք եւ կերպարանք ունին, եւ բարքերնին եւ ապ-
րելու եղանակնին քեզի մի ըստ միովէ պատմելը դժ-
ուար է: Աւթն ամիս է որ ճանապարհորդութենէն
շատ ուրիշ բան ըրած չունիմք, գիշեր ցերեկ կեր-
թանք, եւ մեզի կըսեն որ թաթարներուն կայսեր
բնակարանը տանող ճամուռն տակաւին կէսը ըրած
եմք: Ստոյգ իմացանք որ հիմակուան կայսեր հայրը
Գուլուգ խանը հինգ տարի է եղեր՝ որ մեռեր է.
բայց թաթար իշխանները եւ պարոնները այնքան
հեռու տեղեր ցրուած են որ այս հինգ տարուանս մէջ
չեն կրցեր նոր կայսր ընտրելու ժողովուրդ: Ոմանք
Նոկաստան էին, ոմանք Չին կամ Ռուսաստան կամ
ուրիշ երկիրներ:

« Բոլոր արեւելք ցրուած բաղմաթիւ քրիս-
տոնեայներ գտանք, շատ ալ հին եւ բարձրաշէն եւ
աղէկ շինուած եկեղեցիներ՝ որ թաթարները փր-
ցուցեր էին. Վրիստոնեայները խանին քով գացին՝
որ շատ պատուով անոնք ընդունեց եւ ազատութիւն
տուաւ եւ իր պաշտպանութեան տակն առաւ, խիստ
պատիժներ սպառնալով պատուէր հանեց ամենուն որ
ո՛չ դործով եւ ո՛չ խօսքով անոնք չվշտացընեն: Թէ-
պէտ մեր մեղացը համար հոն Յիսուսի Վրիստոսի
հաւատքը քարոզելու մարդ չկար. բայց տէրն մեր
ինքնին կամեցաւ հոն ղենքը յայտնել, եւ ամէն օր
ալ կը յայտնէ շատ հրաշքներով, անանկ որ՝ հիմայ

բիւրոյ այս ժողովուրդը անոր կը հաւատան : Բայց
 Հնդկաստան՝ ուր որ սուրբ Թովմաս առաքեալը
 քարոզեց եւ շատ մարդ հաւատքի բերաւ , մէկ քը-
 ռիստոնեայ Թագաւոր մը կը գտնուի որ իր դրացի
 այլահաւատ Թագաւորներէն նեղութիւն կրելով , վա-
 սըն զի մինչեւ Թաթարներուն այն կողմերն եկած
 ատենը անոր դէմ սաստիկ պատերազմ կընէին , ա-
 սոնց պաշտպանութեանը դիմեց . եւ իր ջօրքը անոնց
 զօրացը խառնելով անանկ յարձակեցաւ եւ զարկաւ
 իր օտարահաւատ Թշնամիները՝ որ Հնդկաստանի շատ
 տեղերուն տիրեց , եւ հիմայ այն երկիրը այլահաւատ
 գերիներով լեցուն է . վասն զի ես հինգ հարիւր հա-
 զարէն աւելի տեսայ որ Թագաւորը գերի բռներ էր
 եւ՝ աճուրդով կը ծախէր* :

«Այս ալ զիտցած ըլլաս որ նորին սրբազնու-
 Թիւնն ալ (հռոմայ հայրապետը) մեծ խանին դես-
 պաններ խրկեց հասկընալու Թէ արդեօք քրիստոնե-
 ա՞յ է Թէ չէ՝ , եւ ինչո՞ւ համար աշխարհք բանդե-
 լու եւ կործանելու համար զօրք հանած է ամէն
 տեղ : Խանը պատասխան տուաւ որ Աստուած իր
 նախորդներուն եւ իրեն պատուիրեր է ամէն չար եւ ա-
 նըղգամ աղդերը՝ վերցընելու համար զօրք խրկելու :
 Քրիստոնեայ ըլլալուն կամ չըլլալուն հարցմանը վը-
 րայ պատասխանեց Թէ անիկայ Աստուած գիտէ . եւ
 Թէ որ պապն ալ զիտնալ կու գէ նէ Թող հրամէ հոս

* Այս Թիւը անհաւատալի կը Թուի , գուցէ 500
 կամ 1000 ըստուէլու տեղը օրինակագիրը 4^ա բառը
 մոռցեր է . եւ գերեաց Թիւն եղեր է 500.000 :

Գայ զիս տեւնէ եւ ինծմէ սովորի ։

Յաւ է որ այս նամակը գրող գունդատապլին անունը գրուած չէ՛. բայց յա՛յտ է որ Ուրբինեան թագաւորներուն մէկ նախարարն է որ թաթար խանին դեսպան խրկուեցաւ . վասն զի մեր Ուրբինեան թագաւորները թաթարներուն հետ բարեկամութեամբ կը վարուէին . եւ այս դեսպանը այս տեղեկութիւնները գրեց Աիպրոսի թագաւորին , որ լուսինեան ցեղէն ըլլալով ուրբինեան թագաւորներուն աչաք-գական էր :

(ՄԵՂՈՒՒՆ ՀՐԵՏԱՐԱԿՈՒՆ

ՔԱՆԻ ՄԸ ԽՐԱՏՆԵՐ

Գ .

Սուտ մի՛ խօսիր . եւ այս խրատս մտիկ չընեն . ինչո՞ւ համար իրաւունք մը չէ՛ ըսելդ թէ Մեղուն կատակաբան է , սուտ խօսիլը անոր համար փնաս մը չունի . Բերանդ սուտի սովորեցընես նէ առանց կա-տակի խօսածներուդ մէջ ալ սուտեր կը փախչին , եւ երբեմն ուրիշի՛ պատուոյն պղտիկութիւն բերելու սուտեր ալ . Ըսոր օրինակ մէկ հաստ մը պատմեմ :

Մեղուն մեջ գրեր էիր (Ժող . 20 Բ- 125.) , որ քիւրքի Գ . Համարձումը “Մարկոսեան Պրի-

« Գոր էֆէնտիին առջևը անոր ձեռքն ու երեսը
 « Համբուրած ատեն . . . ըսաւ թէ, ա'ֆ կընէք աղա .
 « Եստուած վկայ ես չուղեցի պուալ . բայց ի՞նչ
 « Ընեմ . տեղս հանգիստ չէին թողուր . պօռա' պօ-
 « ռա' տէյի թեւս եախաս կը քաշէին », : Եսորայս-
 պէս ըլլալուն դուն ալ Եստուած վկայ կըրնաս բռն-
 նել . բայց քու հաւնած Հիւսիսային Կիւսիսէն աս-
 ուաքը չեմ ուղեր . մեր պաշտած Ճշմարիտ Եստուածը
 կրնաս վկայ ընել որ Վիւրքճի Պ . Համբարձումը
 ճիշդ քու ըսածիդ պէս ըսեր է Ս' Թրէոսեան Վրի-
 գոր աղային առաջը : Երգեօք զրածդ Վրիգոր աղան
 կարդաց . եւ կարդալէն ետքը քեզ չկանչեց եւ ե-
 րեսդ վարձառաւ սուտ խօսելուդ համար . ասիկայ
 որ ձեր երկուքին մէջն ըլլալու բան է՝ մենք չեմք
 կրնար իմանալ . Ս' ելուն Պ . Համբարձումին ան-
 խորհրդապահութիւնը չունի . որով բանը ՚ի հարկէ
 երեւան հանէ : (Պ . Համբարձումին համար այս խօս-
 քերն ալ զրեւդ միտքդ կուգայ ես) : Վուցէ դուն
 ալ դրոշներ ունիս այդպէս սուտեր զրելու . եւ
 կանոնաւոր հարցափորձի մը մէջ կը յայտնես . բայց
 չէ՛ . դրոշը ես (չէի մէկտեղէնն էր ըսելով մէկդի
 կեւրես . ինչպէս որ ատենօք նոյն մէկտեղէնն՝ հրա-
 մանքդ Իսկիւտարու Պաղար պաշիի փողօցը գիշեր
 մը պտըտած ատենդ աներեւութապէս քովէդ քա-
 շելով պառաւ կնկան մը բէշին կոխեր է . այն ալ
 դուն կոխեցիր Գարծելով հետդ կռուեր է . բայց
 դուն այն պառաւը ամէցուցեր եւ հետինները խըն-
 դացուցեր ես . ո՞վ գիտէ ինչե՞ր ըսելով : (Ս' եղև
 Բէ . 126 . էր . 52) :

Գիտեմ որ արժանայարգ Սարկոսեան Գրիգոր աղայն կը սիրես ու կը յարգես . սակայն չես գիտեր որ այդ գրած սուտըդ աւելի նոյն աղնուբարոյ անձին կը դպչի , քան թէ Քիւրքճի Պ . Համբարձումին : Սարտի 17ին Րնդհանուր ժողովին ներկայ դտնուող անձինքը կը կարծէին թէ Պ . Համբարձումը բանի մը համար Գրիգոր աղային նեղացած ըլլալուն՝ այնպէս մէկ խօսք մը խօսեցաւ . եւ դուրս վազնաւած առենը հետը դուրս ելլողները՝ միայն մէկ երեսփոխան մը այն կերպով դուրս ըլլալուն վրայ նեղացան ու ելան : Անոնց մէջ Եւրոպայ դպրող ալ կար . հոն սովորած էր որ երեսփոխաններուն ժողովքին մէջ իրարու հակառակ խօսելէն ետքը իրարու հետ կռուիլ ալ կըլլայ . ծեծկուռք ալ հոն չտեսնուած բան չէ . բայց մէկը չկրնար այն կռիւը հանող մարդը ատենէն դուրս վազնաւիլ . եւ ո՛չ նոյն իսկ տտենադետը : Սենք որ կը պարծիմք թէ սահմանադրութիւնով եւրոպացիներուն մօտեցանք , այդ ժողովքէն մարդ վազնաւիլ որկէ՛ տուած ըլլանք : Եւ թէ որ խաղաղարար անձինք չաճապարէին , եւ Պ . Համբարձումը հետը դուրս ելլողներովը ներս չբերէին նէ՛ ժողովքին մէջ քանի՞ հոգի պիտի մնար կը կարծես : Կարելի՛ է թէ դուն ալ կեղեկիր . աներեւոյթ մէկ-իւրեք հոն ձգելով որ ետքը ժողովքին մէջ եղածները քեզի պատմէ . թէ որ ժողովք մնար նէ :

Դուն , որ մտածել ախորժող հայերէն ես . (վախնամ մտածելով որ մը կաթուածի հանդիպիս) , այնպէս կարծեր ես որ Պ . Համբարձումը դրողներ

ունի . եւ թէպէտ այս կարծիքիդ վրայ այնքան հաս-
տատ ես որ այդ խօսքը Պ . Համբարձումին իրեն-
ըսել կուտաս , բայց ո՞վ ըլլալին հասկընալու հա-
մար Պ . Համբարձումը (որ արդէն իր անխորհր-
դապահովեամբը բանը յայտնած՝ եւ յայտնելու մի-
նակ իր դրդողներուն անունը մնացած է ըսիր) , կա-
նոնաւոր հարցափորձի տեղ կըսես . որ երբեմն
Թեալի-ի պային կամ պատանձի պաշին բանտն էր . եւ
հիմայ՝ թէպէտ շատ կերպով անոնցմէ տարբեր , զապ-
րիկին քօլիս է : Եսով կը յայտնես որ քու ըսածիդ
դուն ալ ապահով չես . չէ՛ նէ՛ Պ . Համբարձումը
վերնտուած՝ ատենը հետն ելողներէն զատ ո՞վ կրնայ
ըլլալ անոր դրդողը . ամէնն ալ մէկ կողմէն կելեն .
կրնային նստած տեղերնուն ո՞րը քէլէ՛ որը Խաչէն
քաշելով Պ . Համբարձումը անհանգիստ ընել : Ի՞նչ
անհանգիստ ընող մարդ չկայ . եւ ինքն ալ այդ սու-
տը չէ՛ ըսած :

Պուն քու մեղուովդ հասարակութեան հասկը-
ցընել կուզես թէ՛ արժանայարդ Իրիգոր աղային
դէմ յայտնապէս խօսեցաւ ալ նէ Պ . Համբարձումը
մինակ չէր . շատ մարդիկ կային որ անկէջ տասն եւ
երկու տարուան հաշիւ կուզէին . (զուցէ վանցինե-
րուն վեց տարուանէ ՚ի վեր Կոտուց անապատի առաջ-
նորդ եղող Պօղոս վարդապետէն տասն՝ եւ հինգ
տարուան հաշիւ ուզելնուն պէս . այսպէս հաշիւներ
շատ կը գտնես մտածելու անորժակդ բայց ըլլալով) :
Եւ որովհետեւ այն մարդոց ամէն մէկը ազգին մէկ
մասէն ընտրուելով հոն եկած են , ասով այն արժա-
նայարդ անձը այն մարդոցը կասկածելի կընես .

նոնց առաջը անոր յարդն ու վարքը կը կոտրես :
Քեզի պէս անմիտ բարեկամներէն շատ աղէկ է խե-
լացի թշնամին :

Ս' եղուն 124 թուոյն մէջ կը պատմես որ սուրբ
Նրուսաղէմի նորոգ հանգուցեալ Տ. Յովհաննէս սուր-
բայիչատակ պատրիարքը Կոստանդնուպօլիս սուրբ
Նրուսաղէմի փոխանորդութիւն ըրած ատենը հան-
գուցեալ Տ. Պօղոս անմահ յիշատակաց արժանի
պատրիարքը Նրուսաղէմի հաշիւն անկէց պահանջեր
է՞. եւ այն ալ չէ՛ տուեր. եւ ասիկայ կարգացողնե-
րուդ համար նամակի մը օրինակ ալ կը տպես. որ-
պէս թէ Տ. Պօղոս պատրիարքը այն ժամանակի
Կոստանդնուպօլիսի պատրիարքին գրած ըլլայ որ Տ.
Յովհաննէս եպիսկոպոսը իրեն խրկեն Նրուսաղէմ :
Ետքն ալ բանը համարուի ընելու համար, քու սովո-
րութեանդ համեմատ, «*Երբեք յաւելուած մը կը չենս.*
«*Պօղոս պատրիարքն ալ այս նամակով ազգէն այս*
«*խնդրոյն գործադրութիւնը չպահանջեր. ու փոխա-*
«*նորդը անհոգ կը շարունակէ իր կրկնակի պաշտօնը,*
«*Նրուսաղէմի պատրիարքի փոխանորդութիւնը. եւ*
«*ոչ որի հաշիւ տալը իր առած տուած գումարներուն*
«*համար*» (Բիւ. 124. Էր. 26. 27) : Եսոր ճշը-
մարտութեանը կասկած ընելու ըլլամ նէ որի՞ հար-
ցընեմ. նամակը գրող Տ. Պօղոս պատրիարքը վախ-
ճանած. նամակն ընդունող Տ. Ստեփաննոս պատ-
րիարքը (որ 1838ին մայիս 16ին անիկայ էր Կոս-
տանդնուպօլիսի պատրիարքը)՝ վախճանած. այն ժա-
մանակուան սուրբ Նրուսաղէմի փոխանորդ եւ ետքը
պատրիարք Տ. Յովհաննէս արք եպիսկոպոսը վախ-

մածած . Լ'սիկայ քեզի հարցընենք՝ պարոն մոածելէ
լախորժող . բայց կ'անասոր հարցափորձի ճամբով :

Հնորհ ըզէ՝ մեզի բսէ՝ պարոն . հրամանքդ
քանի՞ տարուան կա : Լ'բե-էլ-ան Գարը 19 թուոյն
մէջ կրտէ թէ տակաւին 30 տարեկան չկաս . որով
ազգային Բնդհանուր ժողովքի մէջ գտնուիլդ , եւ
հետեւապէս ազգի բաներու խառնուիլդ սահմանադ-
րութեան դէմ կը հանէ : Բայց ես կէս մը ներելով ,
կէս մը ալ ընելու փորձի՝ հաշուոյս դիւրութեանը
համար քեզ 31 տարին լրմնացած պիտի ընկամ : Լ'սն
ատենը ծնած կըլլաս 1830ին . եւ այն նամակդ որ
թուականովը հրատարակեր ես , 1838ին գրուած ըլ-
լալով դուն ալ այն ատենը 8 տարուան կըլլաս : Հայ-
րդդ ամիրայից եւ ազգապետաց ժողովքին մէջ բան
չունէր . Պատրիարքարանի հետ սերտ յարաբերու-
թիւն մը չունէր որ այս նամակը իրեն տրուի . եւ
տունը մնայ եւ անկէջ քու ձեռքդ անցնի . մանա-
ւանդ այդպէս փափուկ նիւթոյ մը վրայ գրուած մը ,
որով ազգին կրօնական երկու երեսերի անձանց ազդ-
կուգայ . մէկուն՝ որ սուրբ Երուսաղէմի քերական
գործակալ ըլլալով ալ նոյն աթոռոյն փոխանորդէն
հաշիւ առնելու տկարացեր է . եւ միւսոյն՝ որ հաշիւ-
ւը ծածկեր է՝ վանքին ստակը իր ծոցը լինցունելու
համար : Ուստի շիտակ ըսէ՝ այդ նամակը որ Էօրի-
նակես եւ կը տպես , (հայերը մոածելէն չեն ախոր-
ժիր ըսելով) , որկէ՞ց ձեռքդ անցաւ : Դուն հինգ
վէջ կամ առ առաւելն տասն տարի է որ Պատրի-
արքարանին ճամբան սովորեցար , եւ այսպէս նամակ
մը այսքան ժամանակ , այսինքն քսան տարի՝ դուր-

տերը չպտըտիր. հին նամակներուն հետ վերցուած պահուած կըլլայ, եւ քու ձեռքդ անցնելը միայն գողութիւնով կրնայ ըլլալ. շիտակը զրուցէ՛. դո՛ւն գողցար թէ ուրիշ մը գողցաւ քեզի տուաւ :

Թէ որ ուրիշ մը ձեռքդ անցաւ նէ՛ ալէկ վստա՞հ ես որ Տ. Պօղոս պատրիարքին իւր ձեռքէն ելած է գիրը կամ ստորագրութիւնը. Պօղոս պատրիարքին գիրը կամ ստորագրութիւնը կամ Լոստանդընուպօլսոյ պատրիարքութենէն ելլէն ետքը գործածած կնիքը ուրիշ տեղ, տեսած ունի՛ս. եւ հրատարակա՛յ նամակդ անոր հետ բաղդատե՛ր ես :

Ըսենք թէ կիին ալ նոյն ելաւ. չըլլար մի որ Զովհաննէս հանգուցեալ սրբազան պատրիարքին թշնամիներէն մէկը՝ որ շատ ունէր, Պօղոս սրբազանին վախճանած ժամանակը քովէն կնիքը առնէ եւ այդպէս նամակ մը գրելով կնքէ. Բայց այս ո՞րքան է՞նայ ըլլալէր է. երբ մէկ հասը կօցտէր : Չերնա՞ք ըլլալ մի որ այդ նամակը շինողն ալ ծախողն ալ գուն ըլլաս : Սեղուն կարդացողներուն վրայ վըստահ ես որ ինչ կարդան նէ կը հաւատան. քանի որ խելքիդ փըչէ նէ մէկ մէկ սուտ կը խօթնս մէջը. չես նայիր թէ պատուոյ կը դպչի՞ թէ չդպչիր. ետքն ալ կեցես՝ Սեղուն առնող ըստանորդներուդ պատիւ մըն ալ կրնես ըսելով թէ մտածելու ախորժակ չունի հայր. վասն զի քու գիտնալու հատիւրդ մինակ անոնք են. փորձդ անոնց վրայ կընաս ընել :

Ըսածներէս այնպէս մի՛ կարծեր որ հրամանքդ բացարձակաբար գող կանուանեմ. այդպէս

ճամակ մը չկենալուն այնպէս տեղաց վկայութիւն
 տնիմ որ հաւատարիմ կը կարծեմ. որովհետեւ ու
 նեցած պաշտօնը միայն հաւատարմութեան կողմանէ
 վկայեալ անձերու կը հաւատասցուի: Ուստի միայն
 սա՛ ըսել կուզեմ որ նամակդ ստացօղ է, եւ ՍԻ-
 ՆԻՊ ստախօս. այսինքն՝ հրամանքդ: Թէ որ նտա-
 խօս չըլլալդ հաստատել կուզես նէ՛ նամակին յար
 եւ նմանը իր բնագրին ճիշդ ձեւադրովը եւ ստո-
 րագրութիւնովը եւ կնքովը՝ վիճաբայ արուեստով
 (լիթօգրաֆով) կրնաս հանել տալ. բայց այն ժա-
 մանակը գողութեան աղտն ալ վնայէդ քերելու հա-
 մար հարկ կըլլայ ի՞նչ ճամբով այդ նամակը քու
 ձեռքդ անցած ըլլալն ալ խաջընել որպէս զի
 ազգը իմանայ իրեն հաւատարիմ գործակալները .
 եւ թէ որ պատրիարքարանէն կարնւոր թուղթ մը
 կորսուի նէ՛ որի՛ բով ընտուկիքը դիտնայ: Ուրիշ
 մինչեւ հիմայ հրատարակած սուտերդ ՄԵԼԵՔԱՆ
 ԳԻՐԸ վրան առած է շիտկելը. եւ անարոյս սկիզ-
 բէն ալ սկսած է. որոց ամէնուն ալ դուն ըսու-
 թեամբ իրաւունք տուած ես. եւ չես կրնար ըսել
 թէ անոր գործերն արհամարհելուդ համար չես
 պատասխաներ: Ասիկայ այն ատենը կրնայիր ըսել՝
 երբ անոր ըսածներուն մինչեւ հիմայ բնաւ չպա-
 տասխանէիր. բայց երբ անոր տառասխալները եւ
 քառասխալները երեսն հանեցիր չեմ գիտեր ՍԵՂ-
 ՈՒԴՊ որ թուոյն մէջ. հիմայ չպատասխանելուդ ա-
 նոր գրածները ճշմարիտ ըլլալը խոտտովանէին զառ
 պատճառ չես կրնար ունենալ, թէ ըրածը զրպար-

տութիւն է նէ՝ հարկ է պատասխան տալ, քոս
պատուոյդ համար չէ՝ ալ նէ՝ գո՛նէ՛ ՚ի սէր ազգին՝
որուն մասք ինչ աղչելն եւ. վասն զի պատհգ
կոտորուելն՝ եւ զուն իրրեւ ստակսոս հրատարակ-
ուելէդ ետքը, (եւ չէ՝ թէ միայն իբրեւ ստակսոս,
այլ եւ իբրեւ զօրարտիչ եւ ազգատեաց եւ եղբայր-
ատեսց եւ շահսխնդիր եւ աշտու), ըսածներդ
Մեղրի բըզլնքէ մը աւելի յարդ չունենար. եւ
ազգին վսայ ունեցած քաշեալ ազգեցութիւնդ կոր-
սընցընելով մեղք կընես ազգին որ իրեն գոնէ մա-
սք ինչ շիտկուելը քեզնէ պիտի ճանչնայ, եւ
մնացած մասին շիտկուելն ալ քեզնէ պիտի յու-
սայ, Վոհութիւն Աստուծոյ որ ազգին խիստ մե-
ծագոյն մասը շիտկուելու համար քու ձեռքիդ կի-
սաբուրը շարունակն (այսինքն մանգաղին) կարօտ
չէ՝

Մ ՈՒՐ Կ Ե Ճ Ե Ճ Ե

Մ ուրքը այս որ տեսա՛ զարմանքը աւելնալով
 մինչեւ ապշութեան աստիճան հասաւ : Կիչ մը ա-
 տեն տարտամ տարակուսած մնաց . կը մտածէր թէ
 արդեօք պառախն սովորական ըրած խաղը իր վրան
 առնէ՞ եւ ինքն ալ անասուններուն հետ ներս մանէ :
 Բայց կնկանը խորու մոլոր նայուածքը եւ անօրինակ
 հագուստը իր սրտին մէջ վախ մը կը ձգէին առանց
 զիտնալու թէ ինչէ՞ն կը վախնայ : Ա կը ջապէս ա-
 նօթմութեանն աւելնալը իրեն սիրտ տուաւ քաջացաւ
 եւ դռնէն ներս մտաւ արհաւիր : Ք ուստ մը զեղ-
 նաշոյն կառու առջեւէն կը վազէին կերթալին . ինքն
 ալ անոնց ետեւէն խնալ միտքը զրաւ խելօք՝ մտաւ
 ծելով որ անոնք ուղղակի խոհանոցը կերթան :

Սանգուղքին գլուխն որ հասաւ՝ պատուհանին
 առջեւի պատաւը դէմն ելաւ ու զինքը հոն կոյնե-
 ցուց . նեղացածի պէս հօրցուց , ի՞նչ կուզես :

Մ ուրքը պատասխանեց . ամէն ալ կերակուրի
 հրախրելի լսեի . եւ որովհետեւ ես ալ երեք օր
 է որ անօթի ծարաւ ճամբայ կը քալեմ . ասոնց ներս
 մանողները տեսնելով անոնց հետ եկայ :

Պ առաւը գլուխն երեքցրնելով բաւ . բայց՝
 ստահակ տղայ . չտեսար՝ որ իմ հրաւերս նրի՞ւն . իմ
 բարեկամներս շուններն ու կատուներն են . մարդիկ
 թող խոտ ուտեն :

Սուրբ ըսաւ . բայց ես շատ անօթի եմ . ուսկէն զատ՝ խաթուն , այնքան պզտիկ եմ , այնքան պզտիկ , որ կատուէ մը աւելի բան չեմ կրնար ուտել :

Ըսոր այս պարզ խօսքէն սխառութիւն սիրտը կապուեցաւ . որ հաճեցաւ անիկոյ երկու խօսքի կատուներու հետ սեղանախից ընել : Անոք ալ աչքերնին մեծ մը բացած ծուռ ծուռ վրան կրնայէին , որպէս լճէ ընել կուգէին . այս ալ որիկէց եկաւ : Բայց Սուրբ տոջեւը դրուած սկաւառակը սրբելու զբաղած ըլլալով անանկ բաւեր դիտելու ժամանակ չունէր :

Եւոր որ կշտացաւ , պառաւը ասոր ըսաւ . փոքրիկ Սուրբ , քովս կը կենան . դործ քիչ , կերակուր ուղածիդ չափ . բանիդ կուգայ :

Սուրբ , որուն սխորժակին աղէկ եկած էր ապուրը , առաջարկութիւնը ուրախութեամբ ընդունեց . եւ նոյն օրը Բհաւի խաթունին ծառայութեանը մըտաւ : Պառաւին անունը այս էր :

Ըսոր ցոյց տրուած գործը յիրաւի թիւթեւ բան մըն էր . բայց շատ արատուոյ էր :

() ր յատկացուցած էր խաթունը՝ բոլոր թաղեկաւ անասունները կերակրելու . եւ ասոնցմէ զատ՝ իրեն յատուկ ըլլալով երկու արու կատու եւ չորս աւ քած կատու ունէր . որոց մասնաւոր ինամբ կը տանէր : Սուրբ յատկապէս ասոնց ծառայելու դրուեցաւ : Ըմեն աստու ասոնք սիրտի լուար . սանրէր , եւ անուշահոտ իւղերով օծէր : Խաթունը գուրս ելլէր նէ՝ կատուներուն հոգը տանելը Սուրբին պարծնէր . կերակուրնին պիտի տար եւ կերած ատեննին :

քովերնին պիտի կենար . և որը մեծաքանայ կակուղ
բարձերու վրայ պիտի պառկեցընէր . և վրանին ալ
թաւիշէ (գետի՞՞) վերմակ պիտի ծածկէր :

Տաւը մէջ Սուրբին խնամոցը յանձնուած քանի
մը մանր մուր կատուներ ալ կային . բոլոր անոց
համար այնքան բանիւր պէտք չէին . յառկապէս գործը
այն վեց կատուններուն համար էր . որպէս լմէ
ասոնք Սահմանի խնամունին պաւակներն եղած բլլա-
ւին . Սահման զի աճէն օրուան տեսածը մէկ մը իր
խաթունն էր , մէկ մըն ալ շուններն ու կատունները :

խնամանակ մը այս կերպով ապրիլը իրեն շատ
ախորժ եկաւ : Այստեղ հաց կուտէր . գործ դրեթէ
չունէր . խաթունն ալ իրմէ շատ գոհ կերեւէր : Վայց
շատ ջանքաւ , այս հանգիստ կեանքն արեւեցաւ .
կատունները ապստամբեցան և Սուրբին խօսքովը չք
կառավարունելով անոր վիշտ եւ ցաւ տալ սկսան :
Խաթունը դուրս ելածին պէս ասոնք անոր սենեակը
կը մտնէին . կը ցաթմէին խնամի պէս , կը խաղա-
ւին , իրարու հետեւէ կը վազվրտէին և առաջին
իւր գործընէ կը ձգէին . և ասով շատ մեծապիւն
անօթներ կ'աղւոյն : Խաթունին սանդուղքէն վեր
ելլելուն ոտքին ձախը լսելուն պէս կիւթային իրենց
բարձին վրայ կը կրծկըտէին և վրանին ընդլու կըս-
կըսէին անանկ հանդարտ և անխօսիկ որ սենեակը
տալն ու վայրը լլլալուն պատճառ Սուրբին բլլալուն
վրայ խաթունը ամենեւին չէր տարակուսեր : Խնդճը
ես անմէջ եմ կըսէր . բանն եղածին պէս լրացատմը
բայց պառաւ իր կատուններուն հանդարտ կենալ
կեղծեղնուն աւելի կը հաւատար , քան թէ սպասաւո-

րին. եւ օր մը բանը մինչեւ հոն հասցուց, որ խա-
թունը. Սուրբն սաստիկ պատիժ սպառնացաւ թէ որ
իր պաշտպանեւ լատուներուն աղէկ չնայի:

Սուրբ այս հանապազորդեան յանդիմանու-
թենէն շատ նեղակալ լի եւ տրտմելով. որոցմէ ա-
ղափիլը իր ձեռքը չէր. միտքը գլաւ որ Եհովայի
խաթունին ծառայութենէն ելէ: Իայց իր առաջին
ճանապարհորդութեան ատենէն սուրբած ըլլալով որ
առանց արծաթոյ անդրելու պէս բան չիրնար ըլլել,
առաջ այն մտտաց թէ ինչ ճամբով կրնայ ըրած
ծառայութիւններուն վարձքը առնել, որ խաթունը
տալ խոստացներ էր. բայց մինչեւ այն օրն ստակ մը
չէր տուած:

Եհովայի խաթունին տունը մէկ ծածուկ սենեակ մը
կար որ նոյն խաթունը միշտ մեծ խնամով գոց կը
պահէր. Սուրբ ալ երեսն այն սենեակէն աղմուկից
ձայներ լսած էր: Իսկ վարձքին վրայօք ստածած ատե-
նը միտքը եկաւ որ գուցէ պատար իր գանձը հոն
պահած ըլլայ. եւ ասոր վրայ բոլոր ուշադրութիւ-
նը մէկ մը այն սենեակը մտնելու միջոց մը գտնելու
դարձուց:

Օր մը Եհովայի խաթունը դուրս ելած էր. Ե-
սիկայ մէկ պզտիկ շնիկ մը ունէր՝ որուն աղէկ չէր
նայեր. իսկ Սուրբ ասոր առջի սիրով եւ խնամքով
նայելով զինքը սիրցուցած էր: Եսայ շնկը եկաւ այն
ատենը որ պատար տունը չէր, լայն վարտիքէն
խաճաւ եւ կը քաշէր. որպէս թէ քիչ մը հետս ե-
կուր ըսել կուզէր: Սուրբ որ շատ անգամ այս ա-
նասնիկին հետ կը խաղար եւ անոր համը ընդունէն կը

հասկընար, ետեւէն գնաց մինչեւ խաթունին պառ-
կած սենեակը: Ընդ սենեակին մէջ մէկ մը տեղ
տեղ ոտքովը քերելով, եւ հոտուրդալով, պտրտելէն
հոտը կաղնի (մէլէ) տախտակի մը առաջ կայնեցաւ.
մէկ մը անոր եւ մէկ մընալ Սուքին երեսը նայելով
կը հաջէր: Սուք տախտակին վրայ մէկ մը զարնե-
լով իմացաւ որ ետեւի կողմը վերէն վար պարապ է:
Լսիկայ դուռ մը պիտի ըլլայ. բայցի՞նչպէս բանա-
լու է ըսաւ ինքն իրեն: Բանալիքի ծակ կամ ուրիշ
բացուելու տեղ մը չերեւիր վրան: Ընդ խորունկ
ձայնով հաջելը կը շարունակէր. եւ կերեւէր որ վի-
շապի պատկերի մը դէմ է հաջածը, որ պղինձ բե-
ւեռներով ձեւացած էր տախտակին միջին տեղը:
Սուք ձեւքը այս պատկերիս վրայ կը պտրտցընէր
շրջապիծը քննելու համար. մատը ահամայ բեւեռ-
ներուն մէկին վրայ քիչ մը ուժով դպչելով բեւեռը
դէպ 'ի ներս հրուեցաւ. եւ տախտակը իր ծինիքին
վրայ դառնալով՝ սենեակը բացուեցաւ, որուն այնքան
ժամանակէ 'ի վեր մէջը մտնելու կը փափաքէր Սուք
որ այս տեսնելով զարմացաւ:

Տեսքը օտար էր եւ նայողին աչքը կը յափըշ-
տակէր: Ճշմարիտ կափառնառւմ մըն էր. հազար
կերպ բան կար մէջը խառն 'ի խուռն լեցուած: Ը-
մէն ժամանակի եւ ամէն երկրի հագուստներ, տար-
րալոյծի ոգէհան (խմպիկ), վերի ծայրը բոլորակաձեւ
շինուած ապակի անօթներ, գնդակներ, մէջը յար-
դով լեցուած թուղոց կ'ախը, զձեր, ոմանք սիւնե-
րուն վրայ փաթտուած, ոմանք դետինը դալարուած
պստկած, մարդոց եւ կենդանեաց ոսկրներ, դիւ-

Թական հայելիներ, վանդակներ, կոյմնացոյցներ, եւ ուրիշ ո՛ր մէկն ըսեմ, կախարդի մը պէտք եղած ամէն բան հոն էր :

Սուք շուարեր էր . մէկ մը մէկ բանին քով կերթար, մէկ մը մէկաւն . տղայական հետաքրքրութեամբ ամէն բան կը քննէր . պզտիկ տղու մը պէս ամէն բան մէկ մը ձեռքը կառնէր :

Ըմենէն աւելի ուշադրութիւնը դրաւ ողն կղաւ Պոհէմիայի բիւրեղէ շինուած անօթ (վազո) մը . Չեռքն առաւ եւ ամէն կողմի կը գարձընէր . չէնքին վարպետութեանը վրայ նայելէն ու զարմանալէն չէր կշտանար : Երբ յանկարծ զըփրտոց մը ելաւ : Սուք այս ձայնէն սոսկաց . այն միջոցին անօթը ձեռքէն վար ինկաւ, եւ լծնդանօթի նման ահագին բոսբոսներով հաղար կտոր եղաւ :

Ախնալուն չափ բան մը չկար . բայց ձեռքէն ելած փնտը ծանր էր : Ըսանկ ղէպքէ մը ետքը խեղճ տղուն արտօրնօք անկէց դուրս ելլելէն զատ բան չէր մնար . պառաւը վրայ պար նէ բանը գէշ էր :

Ընելիքը շուտ մը որոշեց . բայց ի՞նչ բանի համար ներս մտածը մոռցած չէր . ստակ չգտնէր ալ նէ՛ մէկ հագնելիք մը կամ իրեն ծոռայելու մէկ բան մը գտնելու յուսով բընտրատուքի սկսաւ : Ըսն միջոցին աչքին ջուլտ մը հին ժամանակուան շէնք եւ արդէն հինցած մուճակ տնսնուեցաւ, որուն մեծութիւնը իրեն շատ աղտոր եւ հաճելի երևցաւ : Կարծես թէ սկիզբէն հսկայի մը ոտքի չափով շին-

աւած էր. . եւ Սուրբին ոտքերուն պէս երկու ոտք
հանգիստ կը մտնէր մէջս. Սուրբին ալ ատիկայ սիրե-
լը ճիշդ ասոր համար էր ինքն իրեն կը մտածէր թէ
այն մուշակները հագնելով շափսհաս մարդոց կարգը կը
մտնէ, եւ մէկ մըն ալ մարդ զինքը տղւ տեղւոյնէր:

Սէկ պղտիկ դաւաղան մըն ալ կար Հոնդ-
կաստանի եղեղէ չինուած, որուն զլոխը՝ առիւծի մը
զլուխ քանդակուած էր. Այս ալ մուշակներուն պէս՝
Լհագի խաթուրին շնորհակալ բան մը երեւցաւ
Սուրբին: Լոս ճամբայ բրած ատենս ատիկայ իմ բա-
նիս սղէկ կուգայ կըսէր. ուստի այս ալ առաւ. եւ
որպէս թէ ընտրութեան ճիշդ ասոնք ըլլային՝ ալ
ասկէց ետքը ուրիշ բան չընտրուելով սենեակէն ելաւ,
տանը դռնէն ալ ելաւ, ամենեւին ետին շնայած մին-
չեւ քաղաքին դուռը հասաւ: Հոն որ եկաւ տակա-
ւին զինքը ապահով չգտնելով, այնքան վաղէց՝ մին-
չեւ որ շունչը բոլորովին հատաւ:

Եւ լորկենացումէջ Սուրբ այսքան երկար ճամ-
բայ ըրած եւ այսքան շուտ քալած չունէր: Եւ այց
ո՛րքան յոգնած ալ էր նէ՝ միշտ քալելու անորժակ
մը կիմանար. անանկ կուգար իրեն՝ որ մէկ գերբնա-
կան զօրութիւն մը զինքը կըստիպէ որ ուզէ չուզէ՝
քալէ: Սուրբ բարակ միտք ունէր ինչպէս որ առաջ
ըսինք: Հասկըցաւ որ մէկ կախարդական զօրութեան
մը ազդեցութեան տակ է. եւ այս զօրութիւնս մու-
շակներէն ըլլալ կուսկեց. ուստի՝ ինչպէս որ ար-
շաւակ ձիերուն կը պօսան կայնեցընելու համար, ինքն
ալ իր հագած մուշակներուն շեւշ, կայնէ՛, կամա՛ց
կը պօսար:

Վերջապէս մուճակները կայնեցան . եւ ինքը
լըխկած՝ գետինը փռուեցաւ , եւ յողնութենէն քունը
սարաւ :

ԵՅԼ ԵՒ ԵՅԼԻՔ

Թեթեւեւ հաւորեալ խորհրդէն : Լակն թամուր՝ իր
բռնաւոր եւ աշխարհասէր բարքովը ամենուն ծանօթ
մարդ մը եղած է : Եսի՛այ Հայաստան արշաւելով
Երարատ դաւառին Բաղրան բաղաքն առաւ . եւ բա-
ղաքին հայ բնակիչները զատ մէկ կողմը՝ տաճիկնե-
րը մէկ կողմը կայնեցընելով՝ երկու կողմէն սլ ե-
րեքական հարիւր հոգի , համբաւ մը հանել տուաւ .
որպէս թէ բռնակալը քրիստոնեայները պիտի ջար-
դէ , եւ տաճիկները անոնց ձեռքէն ազատէ : Եւս
լուրը հաւատալով երկու եղբայր՝ քրիստոնէից մէջէն
կամացուկ մը տաճկաց կողմը անցան . լայց լսած
համբաւին սուտ էր . Լանկ թամուր տաճկները
պիտի ջարդէր . Եւ մարդասոռչ հրամանն որ տը-
ուաւ՝ եւ դահլիճներն սկսան տաճկները ջարդել ,
երկու դասալիք քրիստոնեայները պօռսլ սկսան , մենք
տաճիկ չեմք , քրիստոնեայ եմք : Եւսն ատենը դա-
հլիճներն ըսին . սուտ կը խօսիք . թէ որ խօսքերնիդ
իրաւ է նէ անոնց մէջ ինչ բան ունիք , այդպէս սու-

տով չէք կրնար ազատիլ, եւ երկուքն ալ միւսներուն
հետ մեռցուցին :

Եւ զայն օր Երեմիայի կան որ առաջ ողջամիտ կողմը
կը գտնուին . ըստ Եսայի կամ վախով կամ անա-
ծութեամբ կամ շահասիրութեամբ կամ ուրիշ ինչ եւ
իցէ նկատմամբ մը իրենց խղճին մատնիչ կըլլան , հը-
ղօրագոյն կողմը կանցնին : Ասանկներուն մէջ իրենց
կրօնական տեղեկութիւններն ուրացող ալ կայ : Ասով
ի՞նչ կը վաստակին : Եւ իմայ այդպիսիներուն իրենց
դաստիարակը ըլլալուն համար մեռնելէ վախ չկայ . բայց
անկէց գէշը կայ : Ո՛ր կողմէն զստուեցան նէ անոնց
իրաւամբ ատելի են . որ կողմը յարեցան նէ անոնց
մէջ ալ վարկում չունին . որովհետեւ դժուար բան մը
չէ գիտնալը . որ այսպիսիները իրենց գտնուած կող-
մանը ուժ մը չեն . եւ հակառակ կողմն ուժովնայ նէ
հոն կը դառնան : Այս աշխարհիս մէջ վարձքերնին
այս է . հանդերձաւը վաստակելիքնին կրնան իրենք
գուշակել : Աւրիշ մարդիկ ասանկները կարհամարհեն .
բայց մենք ասոնց վրայ կը ցաւիմք . եւ ասանկները
գլխէ հանողները (թե որ կան)՝ ամենայն արհաւիր-
հութեան արժան կը համարիմք :